

կը պարունակէ կարգ մը կարեւոր անուններ եւ իրողութիւններ, զօրոնք կարելի է անկախ փաստերով ստուգել: Դարձեալ, տեղ տեղ տեսանք թէ մինչ ժամանակադրութիւնն ըստ մեծի մասին անկարելի է ստոյդ աղբիւներու վկայութեանց հետ համաձայնեցնել, աւանդութեան ներքին ցուցումները եւ ինչնէնչ տուիքներն, որոնք յաճախ միանգամայն կը հակասին ալ ժամանակադրութեան ներկայ ձեւին ու ընթացքին, կրնան դիւրաւ համաձայնութեան բերուիլ այլուստ ծանօթ ստոյդ իրողութիւններու հետ: Այսպէս, յունահովմէական աղբիւներու, միշտակարաններու եւ Հայոց պատմական ժամանակի աղբիւներու վկայութիւններն ընդունելով իրրեւ չափանիշ, Վրաց ժամանակադրութեան ու աւանդութեան մէկ մասը համեմատական վերլուծութեան ենթարկեցինք, եւ ապա ջանացինք վերակազմել: Եւ վերջապէս, մինչ Վրաց ժամանակադրութիւնն ու աւանդութիւնն անգամ իրենց ներկայ ձեւով խորապէս աղդուած եւ ձեւաւորուած կ'երեւին հայկական աւանդութեան յետնագյուն (զոր օր. Խորենացւոյ քով գտնուող) ձեւէն, յաճախ Վրաց աւանդութեան ներքին տուիքները զարմանալի համաձայնութիւն կը ներկայացնեն արդի պատմական հետազոտութեանց համեմատ վերակազմուած Հայոց պատմութեան հետ, եւ այսպէս երկու կարգ վերակազմութիւնները փոխադարձարար զերար կը լրացնեն ու կը հաստատեն:

Բոլոր այս գործողութեան արդիւնքին նկատմամբ հարկ է անշուշտ խոստովանիլ թէ շատ մը խնդիրներու տրուած լուծումը հազիւ կարելիութեան սահմանին մէջ է, թէեւ կը համարձակինք ըսել թէ քանի մը խնդիրներու մէջ որոշ եւ ստոյդ, ուրիշներու մէջ առաւել կամ նուազ հաւանական եղանակացութիւններու յանգած ենք: Հիմայ ուրիշներուն, մանաւանդ Վրաց լեզուին ու գրականութեան տեղեակ եւ այսպէս աւանդութիւնն ուղղակի ակնաղբերէն քննելու ձեռնհաս մարդոց կը թողունք մը յաճախ զուտ թելադրութենէ բաղկացեալ նաև խափորձը, խղճմտօրէն քննելու, սխալ կամ թերի կողմերն երեւան բերելու, եւ զեռ մութ մնացած մասերը լուսաւորելու համար: Մեր անկեղծ փափաքն է ծառայել մի միայն ճշմարտութեան, եւ ըստ կարի նպաստել պատմական իրականութեանց ի լոյս ելլելուն ու յաղթանկելուն:

(Պ.Ե.Բ.)

Եղիշ Ս. ՔԱՍՈՒԻՆԻ



## ԶԵՀԱՐՄԱՆԱԼԻ ՓՈՂՈՎՐԴՈՒԿԵՆ ԲԱՆԱՀԻՍՈՒԹԻՒՆԸ

(Հայուածութեան)

### 6. Տօնական երգեր:

Զահարմահալում գիւղացիներն առանձին հանդիսով եւ ծէսերով են տօնում իրենց աղդային-եկեղեցական տօները, որոնց մէջ անդրադառնում են նրանց հաւատալիքներն ու զգացմունքները: Տօնական այդ սովորութիւններից շատերը կրում են հին, հեթանոսական դարերի դրոշմը. օրինակ, Վարդավառին իրավը ջուր սրսկելու սովորութիւնը. Տեառն ընդառաջին եկեղեցու բակում փայտակոյթ վառելու եւ նրա վրայից թռչելու արարողութիւնը. սրանց վրայ աւելացնենք համբարձման տօնի ծէսերն ու հաւատալիքները, ինչը քններն ու խաղերը: Այս բոլորը յիշեցնում են մեդ հեթանոսական ժամանակները:

Ահա այդ տօներից մի քանիսի մասին գեղվկուհիները հիւսել են մի քանի փոքրիկ երգերը որոնցից ուշադրութեան արժանի են Ծաղկազարդի եւ Ծննդեան երգերը, որոնց մէջ երգում են Յիսուսի ծնունդը, կանանչ-սիրուն Ծաղկազարդը եւ այլն: Այդ երգերը սովորաբար երգում են երեխաները քրիստոսի ծննդեան գիշերը եւ Ծաղկազարդ կիւրակէ առաւտեան: Նրանք մի քանի խմբեր կազմած շրջում են տների կտուրները, երդիկներից մի սեայլուղ, կախում եւ խմբովին թնդացնում են.

Ցնծացէք, ուրախացէք,  
Պանկը բացէք,  
Մէ բուռ ածէք,  
Ալէլուեա՛, ալէլուեա՛:  
Կամ'

Ծառաղարթար, ծառին զարթար:  
Եեւ եղին սեւ սամաթէէլ.  
Կարմիր եղին նօղ ու կօճաք,  
Հնկէրս ընդաւ ծովի ու ծառաւ.  
Բաջին էկաւ կեռ-կեռ կտուց:  
Ապրի ձեր դաքվօրցուն,  
Տվէք մէյ երկու ձուն ։

Ցնեցիները սովորաբար տալիս են երեխան ձու, չամիչ, աղանց (բոհրուած ցորեն) կամ 1—2 ղուան փող:

### 7. Կրօնական երգեր:

Կրօնական երգերից մեր ձեռքը հասել է միայն մի քանի կտոր. դրանցից մէկը սուրբ էւ

միածնայ մասին հիւսուած գովասանութիւն է:  
Հայութեան սրբազն այդ ուխտատեղին, որի  
հետ սերտ կերպով կապուած է Զահարմահալի  
ժողովրդի սիրտն ու հոգին, երգի նիւթ է  
դարձրել: Աշա թէ ինչպէս է նա դրուատում  
պատմական այդ սուրբ վանքը.

Էջմիածին բանցրը սար է,  
Տաճայնէրը մարմար քար է.  
Հրզարան հիւանթի ճար է,  
Բժշկարան Էջմիածին:

Ուխտ են դալիս բուրէց բուր,  
Հրզարան ախպէր ու քուր,  
Դու էտոնց խօրուրթը տուր,  
Ուխտ ու դիլադ Էջմիածին:

Էջմիածին խօրը թարան է,  
Այթապետ յառաջնօյթարան է.  
Դաս տիրացու մօնթարան է,  
Հօքէվոր դաս Էջմիածին:

Բայց այս չէ բոլորը. տեսէք, գեղջկուհին  
Դեռ ինչեր է ցանկանում սրբազն Մայր-Տա-  
ճարի համար.

Մէ տղիս տէյտէր քշինեմ,  
Մէգիս վայթապետ քշինեմ,  
Էն մէդիս սարդաւարք կօնեմ,  
Էջմիածին քկանդրէցնեմ:

Մի այլ ոտանաւորի մէջ պատկերացում  
է Զահարմահալի մօր կրօնական ոգին. Նրա  
սիրեկան որդին մեծացել է եւ տիրացու դարձել  
ու քաղցր ձայնով շարական է երգում եկեղե-  
ցում. մայրը հպարտ է նրանով, ուստի դրու-  
տում է.

Ցէս պատիկ էր, մեծացաւ,  
Իւրն ճանանչացաւ.  
Խէլքն բոլորէց,  
Յառավօտ լուսացաւ,  
Ցէս վեր կացաւ,  
Նստեց վացվէց,  
Քաքուլը բանդրէց,  
Աստծուն գուհացաւ,  
Վաղէց ժամադուռ,  
Հաքաւ զառ շարիք,  
Կանգրէց դէմ տաճայ,  
Քաղցրը ձայնովը,  
Երգէց շարական.  
Կանգրօղնէրի սիրտն էր ուղում:

Այժմ որդին քահանայ է ձեռնադրուել,  
Աստուծոյ տաճարին սպասաւորող է եւ ժողո-  
վոդին հովիւ, մօր սիրտը լցուած է անհօւն  
ուրախութեամբ, ուստի երգում է.

Տղէս գնաց վանքը,  
Առաւ իւր կարքը,  
Քցէց զառ շուռչալ,  
Վօղնէրն ուղաթափ,  
Կանգրէց դէմ տաճայ,  
Քաղցրը ձայնովը,  
Երգէց ոուրբ ավետարան.  
Կանգրօղնէրի սիրտն էր ուղում:

#### 8. Աղօթքներ:

Դարերից ի վեր Հայ ժողովրդի մէջ  
գյութիւն ունեն մի շաբք աղօթքներ, որոնցով  
արտայայտում է նա իր կրօնական աշխարհա-  
հայեացքը, զգացումներն ու մոռումները: Այդ  
աղօթքները, որոնք մեր կրօնական գրականու-  
թեան գողտրիկ էջելն են կազմում, բաւական  
թւով ամփոփուած են Հայ ազգագրական հաւա-  
քածուների մէջ:

Զահարմահալի Հայ գեղջկուհու քնարն  
եւս կերտել է մի շաբք գողտրիկ աղօթքներ,  
որոնց մէջ պատկերացում է նրա կրօնական  
ջերմեռանդ հոգին: Նրանց մէջ գեղջկուհիները,  
մի առանձին ջերմեռանդութեամբ, դիմում են  
Աստծուն կամ Յիսուս-Քրիստոսին, երբեմն եւ  
Ս. Կոյս Մարեամ մօրն եւ ուրիշ սրբերին  
Ս. Կարապետին, Ս. Գէորգին, Ս. Սարգսին,  
Ս. Մինասին, բաց անում նրանց առաջ իրենց  
գարդուս սրտերը եւ մի ճար, դարման հայցում  
կամ իրենց մելքերի համար թողութիւն  
աղերսում, որպէս զի արքայութիւն գնան: Այդ  
աղօթքները գեղջկուհիներն ասում են օրւայ  
որոշ ժամանակներում. առաւտօտեան՝ քնից զար-  
թելիս, երեկոյեան՝ զանգերը հնչելիս եւ գի-  
շերը՝ քնելիս, Ծանօթանանք: Երեկոյ է. Հնչում  
մի գիւղական եկեղեցու զանգերը եւ ահա ջեր-  
մեռանդ գեղջկուհիների աղօթաւոր բերանները  
միմնջում են.

#### ՕՐՀՆԵԱԼ և Աստուած.

ՕՐՀՆԵԱԼ ի սուրբ զանգաձէնին,  
Երկիր պագանեմ լուս գէրէզմանին,  
Քրիստոսի տեսուն.  
Քրիստոս էկա վէր աշխար,  
Ավերէց դժոխկ,  
Շինէց դրախտ,  
Կաթնով ախպուր,  
Քարէ տաճայ.  
Ես ունեմ Ասծուն վըճար,  
Աստուած անի իմ հօքուն ճար,  
Մեղայ, մեղայ, հըզար մեղայ,  
Խօստովանիմ անքան հըզար.  
Եաւսուրբ կուս Մէր-Մայրամ Աստուածածին,  
Ուրախ սրտով փափաք դամ,

Պարզէրէս ջուղաբ տամ,  
Տէր մէյ Յիսուս-Քրիստոս, ամմէն,

Ոմանք էլ այսպէս են աղօթում.

Եա սուրբ զանգաձէն,  
Հենդ հասնի լստծուն,  
Աստուած լսի, օղորմայ.  
Օրհնեալ է Քրիստոս,  
Քրիստոս էկաւ վէր աշխար,  
Ավերէց դժոխի,  
Շնէց դրախտ,  
Քարէ տաճոյ,  
Կաթնօվ ախպուր.  
Քրիստոս տա մէզ բարբառ լեզու,  
Ապաշխարվենք, վօդը լանք,  
Պարզէրէս ջուղաբ տանք:  
— Տէր մէյ Յիսուս-Քրիստոս,  
Մէյ յէրէսին մէ գուռ բանաս.

Խսկ երեկոյեան քնելիս՝ աղօթում են.

Մայրամ Աստուածածին, կուս Մայրամ,  
Դու ինձ տուր բարբառօց բերան,  
Ապաշխարեմ, մէխէրըս լամ,  
Բարօվ պայծառ վօդդ զամ,  
Քաղցրյէրէսօվ ջուղաբ տամ.  
Յիսուսն է, Յիսուս է,  
Բարի հրեշտակն հօքուս է.  
Ոչ չարն ինձ խափի,  
Ոչ սատանէն ինձ կապի.  
Չարն ինձնից հեռացաւ,  
Բարին ինձի մօտէցաւ,  
Հարգիզ չունիմ բարութուն.  
Իմ մէխէրուն թօղութուն,  
Իմ հօքուս հանգիստ արբայութուն.

Կամ՝

Հաւատամ Տէր կենդանի,  
Մայրամ նստաւ սուրբ սեղանի.  
Մայրամ քուն ես, թէ զարթուն.  
Ոչ քուն եմ, ոչ զարթուն.  
Հողեղնի հոտ է գալիս,  
Գնացէք, տէսէք վով է գալիս,  
Յիրեք ձիավօր է գալիս,  
Մէգն հագ, մէգն սագ,  
Մէգն էլ օսկէրէրան վայթապետ,  
Վայթապետնէրն ժամ անէլով,  
Տէյտէրնէրն բուռվառ տալօվ,  
Արթարնէրն ճլվալօվ,  
Մէղաւորնէրն լալօվ, լոլօվ,  
Փուշ ու տաստակ կոխատէլօվ:

1. Չար աշքի աղօթըներ: Ինչպէս  
Հայաբնակ շատ գաւառներում, այսպէս էլ  
Չահարմահալում գիւղացիները մինչեւ այժմ  
գեռ հաւատում են “Չար աշքին”, որը՝  
Նրանց կարծիքով՝ հմայում է մարդկանց եւ  
շատ թշուառութիւնների ու ձախորդութիւն-

ների պատճառ հանդիսանում եւ դժբախտաց-  
նում բազմաթիւ ընտանիքներ:

Չար աշքը, նիաթը խափանելու եւ նրա  
աղդեցութիւնը հեռացնելու համար, գեղջկու-  
հիները հիւսել են մի շարք աղօթքներ, որոնք՝  
Նրանց կարծիքով՝ բուժիչ յատկութիւն ունեն  
այսինքն հալածում եւ ոչնչացնում են չար  
աշքերին եւ մարդկանց փրկում նրանց չար  
աղդեցութիւնից: Այդ հաւատքն այն աստիճան  
խորացել է գեղջկուհիների մէջ, որ նրանք ամե-  
նաշնչին հիւսեանդութիւնների եւ դժբախտու-  
թիւնների ժամանակ, “Չար աշքը տուէլ է,  
ասելով՝ աղօթել են տալիս: Այդ տեսակի  
աղօթքներից Չահարմահալում ամենից շատ  
տարածուած են “Մէր-Մայրամայ”, աղօթքները՝  
որոնք իրենց հիւսուածքով եւ բովանդակու-  
թեամբ միմեանցից շատ քիչ տարբերութիւն  
ունեն: Ընդհանրապէս “Չար աշքին” աղօթքով՝  
ները պառաւ կանայք են, որոնք աղօթելիս  
վերցնում են մի դանակ կամ մատանի եւ  
պատցնում հիւսեանդի ուսերի ու գլխի վրայ եւ  
շարունակ յօրանցելով՝ շնչում են.

Ա.

Եշխարումը մէ ծօվ կայ,  
Ծօվի մէշ մէ գոլ կայ,  
Գոլի մէշ մէ ծուգ կայ՝  
Յաճկէր ունի արազի,  
Մազէր ունի գրօղի  
Օյ քկթի, օյ քմէրի,  
Չար նիաթին՝ չար փուշ պատի,  
Չար յաճկէր տրաքի:

Բ.

Գնացի Մօսէսայ սարը, մէ ծօվ կայ,  
Ծօվի մէշը մէ գէդ կայ,  
Գէդի մէշը մէ ծառ կայ,  
Ծառի վրայ մէ բուն կայ,  
Բնի մէշը մէ ծու կայ,  
Չվի մէշը մէ օյ կայ,  
Օյը մազ ունի երազի,  
Յաճկ ունի ապիկի,  
Օյ է մէրում, օյ է կթում,  
— Օրհնեալ է Տէր մէյ Յիսուս Քրիստոս:

Գ.

Երուսաղէմ մէ գոլ կայ,  
Գոլի վրայ մէ ծառ կայ,  
Ծառի վրայ մէ ծուղկ կայ,  
Ճըղկի վրայ մէ բուն կայ,  
Բնի մէշը մէ ծու կայ,  
Չվի մէշը մէ ծաք կայ,  
Չար թեւ առաւ ու թռաւ,  
Աստուած տէսաւ, զարմացաւ,  
— Օրհնեալ է Տէր մէյ Յիսուս Քրիստոս:

Պ.

Երուսաղեմայ սարը մէ ծառ կայ,  
Ծառի վրայ մէ ճուղկ կայ,  
Ճըղկի վրայ մէ բուն կայ,  
Բնի մէշը մէ ծու կայ,  
Զվի մէշը մէ ձաք կայ,  
Յաճկ ունի, ապիկ է,  
Մազ ունի, գրող է,  
Յակոս ունի արագի,  
Օցն քթի, օցը մէրի,  
Չար յաճկը, չար փուշ պատի,  
Չար նիաթը տրաքի:

Ե.

Յուսին-յուսին,  
Ի սուրբ կուսին.  
Մայրամ գնաց,  
Որթին հուսին,  
Էրէված էմ,  
Խօրոված էմ,  
Ա՛ռ դանակը,  
Կըտրէ չար յաճկը.  
Չար յաճկը՝  
Չար փուշ պատի,  
Չար նիաթը՝ տրաքի:

Բացի աղօթելուց, գիւղացիները “Չար աչքից” կամ թշնամի մարդու շառից ազատուելու համար, դիմում են նաեւ հետեւեալ միջոցին. “Չար աչք” ունեցողի զգեստի ծայրից դաշտնի կտրում են մի փոքրիք կտոր եւ հիւանդի ոտաթաթերի մէջտեղը դնելով՝ այրում:

2. Աչքի հատի աղօթքները: Չահարմահալում կան նաեւ “աչքի հատ” ի աղօթքներ, որոնց մէջ գիւղացիների բժշկական հասկացողութիւններն են երեւան գալիս: Ա՛յսպէս օրինակ. երբ մէկի աչքի մէջ բծեր (*հատեր*) են դշանում, բժշկելու համար դիմում են հետեւեալ միջոցին. տասներկու աղջիկներ հաւաքում են եւ ջրով լի մի աման դնում հիւանդի աչքերի առաջ եւ մէջը դցում են օխարուեսակ սերմեր՝ ցորեն, գարի, ոսպ, բրինձ, հաճար, սիսեռ, կտաւահատ. յետոյ հիւանդի դիսին գցում են մի ծածկոց. ապա աղջիկներից մէկը մի կտոր գաղ (*վառելիք*) է վառում եւ երեք անգամ հիւանդի դիսին բռնելով՝ շնչում է հետեւեալ աղօթքը.

Հաւան ի թառն,  
Հատն ի ջուրն.  
Հալի հատը,  
Ընկնի ջուրը:

Այնուհետեւ նշյնը կրկնում են միւս աղջիկները եւ այսպէս ուղիղ եօթն օր, որպէս զի աչքի հատն անցնի...

Ոմանք էլ այս աղօթքն են ասում.

Խլէզ Խօրասան,  
Կարիճ գաւազան,  
Օցն ի լուծ,  
Թօխմն ընկոյցը,  
Աստղն ընկոյցը,  
Հատն հալոցը,  
Տէր մէյ Յիսուս Քրիստոս,  
Ամմէն:

3. Վար ու ցանքի աղօթքներ: Չահարմահալի գեղղկական բանահիւսութեան մէջ ուշադրութեան արժանի են նաեւ վար ու ցանքի աղօթքները, որոնց մէջ ցայտուն կերպով երեւում է, թէ ինչպէս հայ գեղջուկը սերտ կերպով կապուած է իր հող ու դաշտին, սիրում է իր եղն ու արօրը, վար ու ցանքը: Կամ մի առանձին սրբութեամբ է մօտենում գէպի իր աշխատանքը, յատկապէս գէպի վար ու ցանքը, որը գիւղացու միակ յօյսն է, նրա գոյութեան միակ հիմքը, ուստի ամենաառաջին սերմը ցանելիս՝ գիւղացին աղօթում է.

Անումն ի Աստծուն,  
Տէր Աստուած քու ումուտիցը՝  
Դու տաս բարաքաթ,  
Տաս ամութուն,  
Որ բոլոր յերգնային թռչուններն,  
Եւ յերգրային սողունքներն,  
Ուտեն,  
Բազմեն,  
Ըատանան,  
Եւ նրանց ավելնորդն,  
Մենք նվաստներս ուտենք,  
Ու փառաբանենք՝  
Հօր Աստծուն:

Անունն ի Աստծուն,  
Դու տաս յանողում.  
Էս մէ բուռն անցվօրականի,  
Էս մէգն էլ թռչուններին,  
Էս էլ աղքատներին.  
Ըուլուն-թռչուն,  
Կերէք իմ ցանածից,  
Կշտացէք,  
Եւ իմ ցանածին,  
Բարաքաթ ասէք:

(Ըստ Հայութիւնի)

ԱՐԱՄ ԵՐԵՄԵՆ

